

ՍԱՅԱԹ—ՆՈՎԱՅԻ ՎՐԱՑԵՐԵՆ ԽԱՂԵՐԻ ԼԵՋՈՒՆ
(ծննդաճ 275 ամյակի առթիվ)

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Բանասիրությանը հայտնի են Սայաթ-Նովայի անունը կրող և նրան վերադրվող մի քանի տասնյակ վրացերեն երգեր՝ պահպանված հետագա ընդօրինակություններով։ Ուսումնասիրությունը պարզել է, որ դրանցից 35-ը ըստուգապես պատկանում են Սայաթ-Նովայի գրչին։ Նշելով այն հանգամանքից, որ Սայաթ-Նովան ապրել ու ստեղծագործել է հիմնականում վրացական միջավայրում, եղել է վրաց արքունիքի բանաստեղծ և իր տղջ ստեղծագործական կյանքում հորինել է նաև վրացերեն, համոզված ենք, որ այդ երգերի թիվը շատ ավելի մեծ է եղել։ Այսինքն՝ Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի մի մասը չի պահպանվել։ Հաակսինշական է, որ վրացի բանաստեղծ Ա. Փուրցելաձեն իր մի բանաստեղծության համար որպես բնաբան բերել է Սայաթ-Նովայի վրացերեն կորած խաղերից մեկի մի քառատողը¹։ Մեկ այլ վրացերեն անհայտ երգի (սխանի արշալույսը) մասին վկայել է Վ. Բարնովը, նշելով, «Հավանաբար, Սայաթ-Նովայի բազմաթիվ այլ երգերի հետ միասին սա էլ է կորել»²։ Իսկ Ջ. Մթածմինդելու (Ճիճինաձե) վկայությամբ, Սայաթ-Նովան ճորտ գյուղացիության հարստահարման առթիվ կալվածատերերին ձաղկող մի վրացերեն երգ է գրել, որ տարածվել է ժողովրդի մեջ և գրգռել ազնվականների զայրույթը³։ Սա էլ, ըստ երևույթին, երգչի կորած խաղերից է։

Սայաթ-Նովայի վրացերեն երգերը, պահպանված լինելով հետագա ընդօրինակությամբ (մեծ մասամբ երգչի որդու՝ Օհանի 1823 թ. արտագրությամբ), հիմնականում աղավաղված են ու պակասավոր։ Սակայն մասնագետները հրաշքով չեն չափ վերծանել, ճշտել ու սրբագրել են այդ երգերի բնագրերը, որոնց հիման վրա հնարավոր է խոսել դրանց լեզվաճանաչական առանձնահատկությունների մասին։ Նման քննությունն, անշուշտ, իրավասու և ի զորու են կատարել ամենից առաջ վրաց բանասերները։ Մենք անդրադառնում ենք այդ խնդրին առավել ընդհանուր մոտեցումով, նկատի ունենալով այն համամասն գերը, որ կատարել է Սայաթ-Նովան հայերենի ու վրացերենի մշակման գործում։ Թարգմանելով Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը, հնարավորություն ենք ունենցել հաղորդակից լինելու նրա վրացերեն լեզվամտածողությանը, ըզգալու սայաթ-նովյան գունագեղ բանարվեստը՝ վրացերենի ինքնատիպ ձևերի մեջ։

Սայաթ-Նովայի վրացերեն (ինչպես և հայերեն) խաղերի լեզվի մասին երբեմն հայտնվել են ծայրահեղ և իրարամերժ կարծիքներ։ Ոմանց բնութագրմամբ, երգիչը գրել է «փողոցի, շուկայի» գոհհիկ-ռամկական լեզվով, ոմանք էլ նրան վերագրել են «բարձր դասի», «բարձր ոճի» լեզու⁴։ Սրանցից ոչ մեկը չի համապատասխանում իրականությանը։

¹ Տե՛ս Ի. Գրիշաշվիլի, Սայաթ-Նովան և հին թրիլիսին (սայաթ-նովա, թրիլիսին, 1918, էջ 52. վրացերեն, թարգմանությունը տե՛ս Ի. Գրիշաշվիլի, Գ. Լեոնիձե, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1983, էջ 26)։

² Նույն տեղում, էջ 54։

³ Տե՛ս «Դրոբեա», 1878, № 119—120 (վրացերեն)։

⁴ Այս առթիվ տե՛ս Գ. Լեոնյան, Երկեր, Երևան, 1963, էջ 380—381, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 36—37, «Բանբեր Երևանի համալսարանի», 1986, № 2, էջ 121։

Ապրերով թիֆլիսյան բազմալեզու միջավայրում, Սայաթ-Նովա-Արուսինք մանկության տարիներին արդեն յուրացրել է վրացերենը և վրացական այբուբենը: Իր առաջին վրացերեն խաղերից մեկում պատանի Արուսին-Սայաթ-Նովան ասել է.

Ոչ որ թող շասի, թե ով է էս պատանին,
Այբուբենը գիտեմ, խոսքով առաջ եմ,
Սայաթ-Նովա են ասում, Արուսինն եմ.
Խոսք կաւեմ, որ հրկինքը ճաքճքի⁵:

Իր ինքնագիր երգարանում՝ Դավթարում, երգիչը ադրբեջաներեն խաղերի մի մասը և բոլոր հայերեն խաղերը դրի է առել վրացական բավական վարժ նոտագրով (միւնդրովի): Բացի այդ, Դավթարի խաղերի մեծ մասի հեղինակային ծանուցումներն էլ գրված են վրացերեն, իսկ թվագրումները կատարված են վրացական տառերի թվային արժեքներով: Այս ամենը վկայում է, որ վրացական գիրն ու լեզուն Սայաթ-Նովայի համար եղել են շատ գործածական ու առանձին:

Պետք է ասել, որ վրաց միջավայրում կարծիք է եղել, թե Սայաթ-Նովան ստացել է վանական բարձրագույն կրթություն: Ջ. Մթածմինդելու դրի առած մեկ այլ ավանդության համաձայն Սայաթ-Նովան կրթություն է ստացել ժամանակի նշանավոր վրացական կրթօջախներից մեկում՝ Դարիայի վանքում: Սակայն երգիչն այդտեղ չէր կարող սովորել միայն այն պարզ պատճառով, որ նրա պատանության տարիներին այդ վանքը, ինչպես ցույց է տվել Գ. Լեոնիձեն, դեռևս գոյություն չուներ. կառուցվել է Հերակլ II-ի կնոջ՝ Դարբեջանի ջանքերով: Բացի այդ, Սայաթ-Նովայի թե՛ վրացերեն և թե՛ հայերեն երգերի լեզվի քննությունը ցույց է տալիս, որ նա չի ստացել դպրոցական հատուկ կրթություն և չի յուրացրել վրացերենի ու հայերենի քերականությունն ու ուղղագրությունը: Անշուշտ, Սայաթ-Նովան հոգևոր-եկեղեցական ու գեղարվեստական որոշ հուշարձանների ընթերցանությամբ հաղորդակից է եղել դասական հայերենին՝ գրաբարին (ինչպես և միջին հայերենին), յուրացրել գրոյ լեզվի որոշ ձևեր ու դարձվածներ, սակայն, ըստ էության, գործնականորեն տիրապետել է իր ժամանակի ու միջավայրի կենդանի խոսակցական հայերենին՝ թիֆլիսահայ բարբառին: Գրասեր երգիչն, ինչ խոսք, կարող էր հաղորդակից լինել նաև հին վրացական գրական որոշ հուշարձանների, յուրացնել Ռուսթավելու, Չախրուխաձեի և Շավթելու մշակած գրական վրացերենի որոշ հատկանիշներ, սակայն երա իմացածն ու գործածածը իր ժամանակի կենդանի խոսակցական վրացերենն էր: Հետևաբար, ընդունելի չէ Լ. Մելիքսեթ-Քեկի այն կարծիքը, թե Սայաթ-Նովան վերականգնացրել է ռուսթավելիական բարձրաճ վրացերենը⁶: Նա չէր կարող անել այդ, և դրա կարիքն էլ չկար: Առանց այդ էլ, հտուտաթավելիական շրջանի վրաց բանաստեղծներն այնքան էին ձրգտում ամեն ինչով հետևել ու նմանվել մեծ Շոթային, որ այդպիսով, ինչպես ճիշտ նկատված է, «դանդաղեցվում էր ազգային գրականության բնաբուխը դարգացումը»⁷:

Սայաթ-Նովայի դերը վրաց գրականության և լեզվի պատմության մեջ բավական մեծ է, և շարժել նրան վերագրել չեղյալ «արժանիքներ»:

Հատկապես Քարթլիի Ռոստոմ թագավորի (1634—1658) օրոք արտաքին ճնշման տակ վրաց իրականության մեջ տարածվում է պարսկա-թուրքական

⁵ Սայաթ-Նովա, Վրացերեն երգեր, Թբիլիսի, 1963, էջ 30 (վրացերեն):

⁶ Տե՛ս «Դրոնբա», 1878, № 119:

⁷ Տե՛ս Գ. Լեոնիձե, Գուսան Սայաթ-Նովա, Թբիլիսի, 1930, էջ 12 (վրացերեն):

⁸ Լ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 37):

⁹ Զ. Բայրամյան, Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի գնահատության շուրջը («Բանբեր Երևանի համալսարանի», 1986, № 2, էջ 116):

կամ մոտավորմանական կենցաղավարությունը. տիրապետող է դառնում նաև պարսկական երդն ու երաժշտությունը: «Նոր Քարթլիս ցխովրերայի» վկայությամբ, իրոստոմ թագավորը Պարսկաստանից «չանգի վրա նվազողներ ու մոտորիբներ բերեց, և ներբողվում էին վրաց պալատականները: Նրանք ևս ունեին մոտորիբներ ու բազում հարճեր»¹⁰: Վախտանգ VI թագավորի (1675—1737) օրոք, սակայն, Վրաստանում իսլամական քաղաքականությունը (ղզլ-բաշաբա) փոխարինվում է վրացականով (ֆաթվեյաբա): Ստեղծվում է օրենսդրություն, բացվում է տպարան, ձեռնարկվում են կրթական-շինարարական մի շարք խոշոր միջոցառումներ: Վախտանգի քաղաքականությունը շարունակեցին Թեմուրազ և Հերակլ թագավորները: Այս պայմաններում, ահա, ծաղկեց վրացական ազգային քերթությունը, հատկապես ժողովրդագրությանական երգը:

Մինչև Սայաթ-Նովայի ասպարեզ գալը վրաց իրականության մեջ տարածված ու արմատավորված աշուղական երգը բացառապես թուրքալեզու էր: Սայաթ-Նովային լիճակված էր վրաց քնարերգության մեջ կատարել վիթխարի բարեփոխիչ դեր: Նա պարսկահանգ-թուրքալեզու բանաստեղծությունը դրեյ վրացական-ազգային ճիմֆերի վրա: Սայաթ-Նովայի այդ ծառայությունը նշել է դեռևս Հովհան Արքայազնը իր «Կալմասուրա» գրքում, որտեղ կարգում ենք. աշուղական երգի «վրացերենի առաջին ներմուծողներն էին հայ երաժիշտները՝ Սայաթ-Նովա կոչվածը և այլք, ապա՝ Բեսարիոն Գաբաշվիլին»¹¹: Նույն այդ գրքում արձանագրված գրույցի մեջ Սայաթ-Նովան ինքը վկայել է. «Ես լավ շնագործ [նվագել] գիտեի և միաժամանակ պարսկական հանգի վրացերեն երգեր գրեցի, [որ] դեռևս ընդունված չէր, և, երբ թագավոր Հերակլը մեջլիսում էր, մեզ՝ նվագողներին, [ներա մոտ] տարան, այն ժամանակ ես պարսկական հանգով վրացերեն երգեցի: Բատոնին շատ դուր եկավ, և ինձ խալաթ էլ շնորհեց: Հետո ուրիշ շատերը [այդպես] երգեցին և ընդօրինակեցին ինձ»¹²: Ավելորդ չենք համարում նշել, որ այս իրողությունը տեղի է ունեցել 1740-ական թվականների սկզբին:

Սայաթ-Նովան աշուղական երգի լեզուն՝ թուրքերենը, փոխարինեց ժամանակի կենդանի խոսակցական վրացերենով և ըստ այդմ այն դարձրեց ժողովրդական լայն զանգվածների սեփականությունը: Ծիշտ է նկատել ի. Մենաբդեն, որ Սայաթ-Նովան վրացական պոեզիան դուրս բերեց արքունիքից և իշխանական պալատներից, մոտեցրեց և հասկանալի ու մատչելի դարձրեց ժողովրդին¹³: Ժամանակին ի. Գրիշաշվիլին էլ գրել է, թե «Սայաթ-Նովայի բանաստեղծությունները գրված են պարզ խոսակցական լեզվով» (Պատոն Իոսելիանու խոսքերն են—Հ. Բ.): Նրա ոճը բոլորի համար հասկանալի էր»¹⁴: Այստեղ, սակայն, անհրաժեշտ է նշել մի շատ կարևոր հանգամանք: Թեև Սայաթ-Նովան իր վրացերեն խաղերի համար ընտրել է ժամանակի կենդանի խոսակցական լեզուն, սակայն նա այդ լեզուն ենթարկել է գրական մշակման: Ուստի և լիովին նույնական չեն երգչի վրացերեն խաղերի լեզուն և ժամանակի խոսակցական վրացերենը, ինչպես Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լեզուն չի նույնանում թիֆլիսահայ բարբառի հետ: Որպես բանաստեղծական խոշոր անհատականություն, Սայաթ-Նովան, ըստ էության, չի բավարարվել խոսակցական վրացերենի ու թիֆլիսահայ բարբառի պատրաստի մակարդակով, այլ բնազդաբար կամ գիտակցաբար ձգտել է բարձրացնել, բանաստեղծականացնել այն: Պատոնական չէ, որ սայաթնովյան խաղերի հետագա կատարողներն ու գրի առնողները, այդ թվում նաև երգչի որդի Օհանը, բանաստեղծի լեզվի մեջ առկա շատ բառեր ու ձևեր չեն ընկալել և պարզեցրել ու աղավաղել են դրանք: Ինչպես գրել է Մ. Բախտինը, «Բանաստեղծական ժանրերի լե-

10 Պ. Մուրադյան, Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների, Երևան, 1963, էջ 26:

11 Նույն տեղում, էջ 97:

12 Նույն տեղում, էջ 95:

13 Տե՛ս «Վրաց գրականության պատմություն», հ. 2, Թբիլիսի, 1966, էջ 648 (վրացերեն):

14 Ի. Գրիշաշվիլի. նշվ. աղբյ., էջ 62:

զուն, որտեղ դրանք մոտենում են իրենց ոճական սահմանագծին, հաճախ դառնում է հավակնոտ, դոգմատիկ և պահպանողական, արտադրական, հասարակական բարբառների ազդեցությունից խուսափող: Այդ իսկ պատճառով պոեզիայի հողի վրա հնարավոր է առանձնահատուկ սրանաստեղծական լեզվի», «աստվածների լեզվի», «բանաստեղծության քրմական լեզվի» և այլնի գաղափարը: Բնորոշ է, որ բանաստեղծը տվյալ գրական լեզուն շրջապատում, ավելի շուտ կերպի անհատական նոր առանձնահատուկ բանաստեղծական լեզու ստեղծելու, քան իրապես գոյություն ունեցող հասարակական բարբառների զործածության մասին¹⁵: Ինչպես հայ, այնպես էլ վրաց դասական հեղինակների լեզուն Սայաթ-Նովայի ժամանակ արդեն գեղարվեստորեն ասպառաժ էր, ուստի թե՛ վրացերեն և թե՛ հայերեն ստեղծագործելիս աշուղ-բանաստեղծը ձգտել է ստեղծել մի առանձնահատուկ բանաստեղծական լեզու, որն, անշուշտ, երկու դեպքում էլ չվերածվեց քրմական լեզվի, քանի որ մնաց իրապես գոյություն ունեցող խոսակցական լեզուների հիմքի վրա:

Սայաթ-Նովայի լեզվի առանձնահատկությունը ամենից առաջ նկատելի է բառային մակարդակում: Որոշ չափով տուրք տալով արևելյան ճաշակին, երգիչն իր վրացերեն և հատկապես հայերեն խաղերի մեջ գործածել է պարսկերենից, արաբերենից ու թուրքերենից եկող բազմաթիվ բառեր, որոնք չկային ժամանակի խոսակցական վրացերենում ու հայերենում¹⁶, Բերենք մի քանի տող վրացերեն մի խաղից.

Շենթվիս կացի միգզավնիս Հինգիս դալամֆարիսաթվիս,
Հինգիս դալամֆարս դավեձեք զարու-զարբար-զարիսաթվիս:
Շենթվիս օքրոս զիւս դավեձեք, վերա վշոպոր զարգարշիս,
Թիթեբի գաքվս շամոսխմուլի, մողվանիլի փարգալշիս...
Ա՛դե, քա՛լո, իթա՛մաշե օքրոս սիմիս լանգարշիս,
Շեն, միջնուր, մոգիխդերա սիրմա-վերցիլի քամրիսաթվիս:
(Քեզ մոտ մարդ եմ ուղարկել Հնդու դալամֆարի համար,
Հնդու դալամֆար եմ փնտրում զար ու զարբար-զարի համար:
Քեզ համար տսկե ճարմանդ եմ փնտրում, չեմ գտնում ոսկերիչի
մոտ,
Հղկված-կոկված մատներ ունես՝ կարկինով չափված,
Վե՛րկաց, ա՛յ աղջիկ, պար արի ոսկե լարի նալագի տակ,
Քեզ, ո՛վ միջնուր, կսազի սիրմա-արծաթը գոտու համար)¹⁷:

Այստեղ դալամֆար, զար, զարբար, զարգար, սիմ, միջնուր, սիրմա օտար բառերը, որոնք գործածվել են գունագեղ պատկերներ ստեղծելու, հանգեր կադմելու և տողերին հնչեղություն հաղորդելու համար, օրգանապես շաղախվել են երգչի բառագանձի մեջ, պայմանավորելով նրա յուրահատկությունը: Գեշենս Թեյմուրազ արքայազնն է նկատել, որ Սայաթ-Նովան «թեև գրում էր սովորական հասարակ բանաստեղծություններ, բայց՝ մեծապես արժանավոր»¹⁸: Պլատոն Խոսելիանու բնութագրությամբ էլ Սայաթ-Նովան «պարզ-խոսակցական լեզվով գրող բանաստեղծ էր, սակայն սուր գաղափարներ ունեցող»¹⁹: Ուրեմն հասարակ ձևով, պարզ-խոսակցական լեզվով գրած իր երգերի մեջ աշուղ-բանաստեղծը արտահայտել է «մեծապես արժանավոր», «զարմանալի իմաստավոր» մտքեր ու «սուր գաղափարներ»: Ավելացնենք նաև, որ նույն այդ լեզվով սիրահար-բանաստեղծն արտահայտել է նաև խոր զգացմունքներ, ներկայացրել բարդ հոգեվիճակներ: Այսինքն սովորական խոսակցական բառն ու դարձվածը նրա մոտ ձեռք են բերել ավելի մեծ տարողություն, հմայք ու ներ-

¹⁵ Երանանդիտության ներածություն, Քրեատումատիա, Երևան, 1984, էջ 173:

¹⁶ Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 34—36:

¹⁷ Սայաթ-Նովա, Վրացերեն երգեր, էջ 37:

¹⁸ Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 99:

¹⁹ Նույն տեղում, էջ 6:

գործական ուժ: Խոսելով Սայաթ-Նովայի լեզվի մասին, Գ. Կենյանը ճիշտ է նկատել, որ այն «վեհ է, հանդիսավոր, բայց ոչ վերամբարձ: Նա գրում է պարզ, հստակ, սահուն և առանց մտքերի խճողմունքի և առանց պաթոսի»²⁰: Դա վերաբերում է թե՛ հայերեն և թե՛ վրացերեն խաղերի լեզվին: Ահա թե ինչպիսի բանաստեղծական արդյունքի է հասել երգիչը իր պարզ ու անպաճույճ, բայց զգացական խորքով լի լեզվով:

Գանա մե մշիների վիղավ, ճամիսաթվին ծամովեդի՞.
Շենթան լապարակի մսուրդա դա միսաթվին ծամովեդի...
Մինդա դիլա զավաթենո, դամիսաթվին ծամովեդի,
Դամավիծդա... Վեղար վամբոբ... ռամիսաթվին ծամովեդի:
(Հենց իմացար սոված էի, լի սեղանի համա էկա՞.
Քիզիդ խոսիլ էի ուզում՝ մողըտ դամի համա էկա...
Ասի, քիզիդ լուսացընիմ, ուրախ ծամի համա էկա.
Մոռացիլ իմ... լավ միտըս չէ, թե ինչ բանի համա էկա)²¹:

Ըստ էության, Սայաթ-Նովան աշուղական օտարմուտ ու կաշկանդիչ ձևավորի մեջ ստեղծեց բարձրարժեք անհատական քնարերգություն, խոսակցական վրացերենն ու հայերենը դարձնելով բարձր ֆեարեբգության լեզու: Միանգամայն ճիշտ է Պ. Մուրադյանի այն կարծիքը, թե Սայաթ-Նովայի նորամուծությունը (աշուղական երգի վրացացումը), գուցե առանձնապես մեծ նշանակություն չունենար, «եթե ի դեմս Սայաթ-Նովայի ունենայինք մի սովորական և միջին կարողության տեր աշուղ: Բայց հարցի էությունն էլ հենց այն է, որ Սայաթ-Նովայի խաղերը բացառիկ գեղարվեստական գործեր են, մարդասիրական քնարերգության լավագույն նմուշներ»²²:

Սայաթ-Նովան աշուղական երգի լեզուն՝ թուրքերենը, փոխարինելով վրացերենով ու հայերենով, ստեղծեց ոչ միայն անհատական բարձր քնարերգություն, այլև ըստ ամենայնի ազգային-ժողովրդական երգ: Կրելով իր մեջ ժողովրդի լեզվամտածողությունն ու կենսազգացողությունը, նա իր երգերի լեզուն սնեց ու ճոխացրեց ժողովրդական բառ ու բանով, առած-ասացվածքով: Ինչպես նկատված է, «կան բազմաթիվ բանահյուսական գրառումներ, որ գալիս են Սայաթ-Նովայի ստեղծագործություններից»²³: Բերենք մի երկտող վրացերեն խաղերից.

Ավի կացիս ճիրի իքներա ավիթ,-
Նաթքվամիս, մե ար վամբոբ ամասա:
(Չարի ցավը շարունակից կու մընա,
էս առած է, յիս ինձնից չիմ հնարի)²⁴:

Սայաթ-Նովան ինքը, որպես «բուրեղացած, խտացած մի ժողովուրդ», իր ստեղծած պատկերավոր արտահայտություններով, թեև վոր խոսքերով հարստացրեց թե՛ հայ և թե՛ վրաց բանահյուսությունը: Պլատոն Խոսելիանու վկայությամբ, Սայաթ-Նովայի «ասածները դեռ այսօր էլ վրացիները իբրև պատկերավոր խոսք են գործածում (բառացի՝ իբրև առակ)»²⁵: Սա նշանակում է, որ Սայաթ-Նովան երգել է վրաց ժողովրդին սրտամոտ ու հարազատ մի լեզ-

20 Գ. Կենյան, Երկեր, էջ 386:

21 Սայաթ-Նովա, Վրացերեն երգեր, էջ 51: Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ...սղորհչաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մուրադյան, Երևան, 1963, էջ 112:

22 Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 32:

23 «Վրաց գրականության պատմություն», հ. 2, էջ 647:

24 Սայաթ-Նովա, Վրացերեն երգեր, էջ 19: Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ...սղորհչաներեն խաղեր, էջ 120:

25 Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 6:

վով, որին հավասարապես խորթ են և՛ արհեստական պաթետիկությունը, և՛ «շուկայական» կոպտությունը:

Ինչպես նկատել է վրացի գրականագետ և արձակագիր Գեորգի Նատրոշվիլին, «իսկապես որ անասելի հարուստ է Սալաթ-Նովայի վրացերենը, նրա բառը նուրբ է ու ճկուն. այստեղ կան սփոփող հանդարտություն, գարնան զրդոս և խորունկ ցավ արտահայտող խոսքեր: Նա կարողացել է գտնել խոսքի այն կախարդանքն ու թախսմանը, առանց որոնց չկա ու չի կարող լինել բարձրարժեք պոեզիա: Այսպիսին է Սալաթ-Նովայի վրացերենը»²⁶:

ЯЗЫК ГРУЗИНСКИХ ПЕСЕН САЯТ-НОВЫ (К 275-летию со дня рождения)

ГЕНРИК БАХЧИНЯН

Резюме

Живя в столице Грузии—Тифлисе, Саят-Нова уже с детских лет знал грузинский язык. Не получив специального школьного образования, он практически владел современным ему живым разговорным грузинским языком, на котором создал несколько десятков высокохудожественных песен.

Саят-Нова был первым в грузинской действительности, написавшим на грузинском языке ашугские песни и сделавшим лирику достоянием широких народных масс.

Являясь крупной поэтической индивидуальностью, он обработал разговорный грузинский язык, превратив его в литературный. Своеобразие последнего заметно прежде всего на лексическом уровне, где налицо ряд заимствований из восточных языков.

Язык своих песен он обогатил народными словами и реченнями, способствуя тем самым развитию грузинской национально-демократической поэзии.

²⁶ Գ. Նատրոշվիլի, *Խոսք կասեմ՝ երկինքը որոտալ կսկսի, Թբիլիսի, 1963, էջ 40* (վրացերեն), «Բանբեր Երեսնի համալսարանի», 1986, № 2, էջ 120: